## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1928 – *Յունիս* – 1928


*էջ*

Հ. Ե. ՓԷՉԻԿԵԱՆ. — *Ամէն-էմ-ոփէի «Իմաստութիւն»ը և «Առակք» Սողոմոնի* . 161

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. — *Կարմիր հրաբուխն, կանաչ դաշտն Շիրակի և կապոյտն Արագած* . . . . . . . 171

ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱ ՍՏԵԼԼԱ. — *Վերջաբան հին հէքիաթի մը (թրգմ. Հ. Ա.* ՂԱԶԻԿԵԱՆ) . 174

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. — *Ուխտաւորները* . . . . . . 175

ԳԻՏԱԿԱՆ

Հ. Խ. ՍԻՆԱՆԵԱՆ. — *Ինչո՞ւ աստղերը բացխփիկ կը խաղան* . . . . 178

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հ. Վ. ՀԱՑՈՒՆԻ. — *Քննադատներուս* . 181

* * * . — *Վենետիկի դպրոցական աշակերտաց ողիմպիականը* . . . . 192


## SOMMAIRE

1928 - Juin - 1928


p.

*P. E. Paitchighian.* — La «Sapience» de Amen-em-opé et les «Proverbes» de Salomon. . . . . . . . 161

TOPOGRAPHIE

*P. G. Nahabedian.* — La plaine de Shiragh et l'ardent volcan du mont Arakatz . . . . . . . . 171

LITTÉRATURE

*Maria Stella.* — L'epilogo d'una vecchia favola (trad. en vers arm. *P. A. Ghazighian*) . . . . . . . . 174

*Karékin Ev. Khatchadourian.* — Les pèlerins . . . . . . . . . 175

SCIENCE

*P. K. Sinanian.* — La scintillation des étoiles . . . . . . . 178

DIVERS

*P. V. Hatzouni.* — Aux critiques de mon livre. . . . . . . . 181

* * * . — La première olympiade des écoles de Venise . . . . . . 192


# ԱՐԺԱՆԱՒՈՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԸ

*Ուրախութեամբ տեղեկացանք տեղւոյս օրագիրներէն և գոհութեամբ կը ծանուցանենք մեր յարգոյ ընթերցողներուն, որ Պր. Տօքդ. Լեւոն Ճինկէօզեան, նախկին սան Մուրատ Ռափայէլեան Վարժարանի, յետ հնգամեայ բժշկական ծառայութեան հարկադրուած ըլլալով՝ հեռանալ Բաէզչէէն (Թրեւիզոյ) ուր կը պաշտօնավարէր պատերազմէն վերջ, ժողովուրդը և քաղաքապետութիւնը ի նշան մասնաւոր գոհունակութեան և երախտագիտութեան, կը պատրաստեն ոսկի միտալ՝ վրան դրոշմած անոր ծառայութեան տարիներն և անունը։ Այս առթիւ մասնաւորապէս սարքուած բազմահրաւէր ճաշկերոյթի մը առթիւ կ'ընծայեն զայն իրենց սիրած և յարգած բժշկին։*

*Տեղական թերթերը մեծ գնահատանքով և գովեստներով յօդուածներ նուիրած էին յարգելի Տօքդորին, որ գիտցած էր իր բժշկական հմտութեամբ և փորձառութեամբ ամէնուն վստահութիւնն և համակրանքը վաստկիլ և փութկոտ խնամածութեամբը սիրաշահած էր բոլորին սիրտը։*

*Մեր յարգելի բարեկամին կը մաղթենք լիուլի յաջողութիւն իր նոր և աւելի ընդարձակ ասպարէզին մէջ։*

ԽՄԲ.

*Կը ծանուցանենք մեր Յարգոյ բաժանորդներուն թէ «Բազմավէպ»ի յուլիս և օգոստոս թիւերը միացած պիտի հրատարակուին։*

digitised by A.R.A.R.@

Կարդացուած 1928 Ապրիլ 26ին Բարիզի Salle des sociétés savantes-ի մէջ. Տոքթ. Սերմէնի մահուան 30-ամեակի առթիւ

Տիկիններ և Պարոններ։

Երբ երկու տարի առաջ Բարիզի հայ բժշկական միութիւնը մեծանուն Տոքդ. Ռուսինեանի մահուան յիսնամեակը կը տօնէր, ես այն ատեն շրջանաւարտ կարգի ուսանող Բատուայի բժշկական բաժնին, գաղափարը ունեցայ շուրջս բոլորելու հայ ուսանող ընկերներս և, հայրենասիրական ջերմ զգացումով լի, որոշեցինք մեր յարգանքի բաժինը մասնաւոր ուղերձով մը արտայայտել։

Բարեբախտ կը համարիմ զիս, որ այս անգամ անձամբ ներկայ կ'ըլլամ երեկոյթի մը, նուիրուած ուրիշ հայ բժշկի մը անմոռանալի յիշատակին՝ Տոքդ. Սէրվիչէնի որ Իտալիոյ Փիզա քաղաքին հռչակաւոր բժշկական համալսարանէն վկայուած, իտալահայ բժիշկներու բաւական երկար ցանկին մէջ նշանաւոր տեղ մը կը գրաւէ։ Ուստի աւագ պարտականութիւն ունիմ որպէս իտալահայ բժիշկ, իմ Իտալիոյ հայ եղբայրակիցներուս կողմանէ յարգանքներու ամենավեհ զգացումները արտայայտել այս յիշատակելի և նուիրական հանդէսին առթիւ և նմանապէս ջերմ համակրութիւն՝ Բարիզի հայ բժշկական միութեան, որ ամենազեղեցիկ և հմայիչ գաղափարը ունեցած է չարունակ այսպիսի հանդիսաւոր բժշկական երեկոյթներ սարքելու։

Իտալահայ բժիշկները միշտ երախտագիտութեամբ կը յիշեն, բժշկական միութեան այս ձեռնարկը և նաև անոր պատուակալ նախագահը Տոքդ. Վ. Թորգոմեան, որ իր եռանդուն և անխոնջ գործունէութեամբ, մոռացութեան մատնուած հին հայ բժշկական դէմքերը, միշտ կը վերակենդանացնէ, առ այս երկար տարիներէ ի վեր նուիրուած ըլլալով համբերատար աշխատասիրութեամբ։

Արդ՝ քանի որ կը տօնենք իտալահայ բժշկի մը մեծ յիշատակը, այս առթիւ կարեւոր կը համարիմ համառօտ կերպով տեղեկութիւն մը տալ խումբ մը հայ բժիշկներու մասին, որոնք կը գործեն Իտալիոյ զանազան քաղաքները և որոնք բոլորն ալ առանց բացառութեան, ազգասիրական ուժեղ և խանդավառ զգացումներով տոգորուած են և հակառակ որ անոնք օտար երկնքի տակ կ'ապրին, չեն մոռնար իրենց ազգը և կ'աշխատին լուրջ կերպով, անաղմուկ, ապագայի վառ ու իրականալի անուրջներով սնած։

Առանց հեռանալու շատ հին դարերը որ ատեն Իտալիոյ մէջ նշանաւոր եղած են բաւական թուով հայ բժիշկներ ինչպէս Բույլեվի, Ալէօրեն, Հէյմէքեան և ուրիշներ, կանգ կ'առնեմ մօտ ատենի մէջ և կ'ըսեմ թէ դեռ քանի մը տարի առաջ մեռաւ Պոլոնիայի բժշկական համալսարանի տարրաբան դասախօս Բրոֆ. Տոքդ. Յակոբ Զամիչեանը, որուն կատարած քիմիական գիւտերը այնչափ հռչակ հանած էին որ զինքը Բարիզի Institut-ի թղթակից անդամ ընտրելու արժանի ըրած էին. Զամիչեան առաջին հայ անդամը եղաւ այդ նշանաւոր կաճառին, մաղթենք որ վերջինը չըլլայ։

Բատուայի մէջ կան այժմ նոյն համալսարանի դասախօս քթի, ականջի և կոկորդի մասնագէտ Բրոֆ. Տոքդ. Երուանդ Ասլանեանը և հայ նորագոյն շրջանաւարտ բժշկուհի մը Օր. Աստղիկ Շիրինեան՝ որ մանկանց հիւանդանոցին մէջ փորձի շրջանը կը կատարէ։

Վենետիկի մէջ ունինք Տոքդ. Մինասեան որ արժանի եղաւ բրոֆ. տիտղոսին, իբրև հմուտ մասնագէտ ախրոդիտեան ախտերուն. և Տոքդ. Պարտիզեանը որ ունի նշանաւոր արեւաբուժութեան (Solarium, հաստատութիւն մը Լիտոյ կղզիին մէջ։

Բաւիայի շըրջանը կը գործեն Տոքդ.ներ Սէրայտարեան և Նուպար Ջէլալեան։

Միլանոյի մէջ կան Տոքդ.ներ Երուանդ Արզումանեան և Ճինկէօզեան ներքին հիւանդութեանց, Մանուկ Խանպէկեան քթի ականջի և կոկորդի մասնագէտ, Արամ Պազարճըգեան մանկանց և Ֆէսլէկճեան իբրև radiologue.

Թորինոյի մէջ ունինք Տոքդ. Զրաքեան որ S. Maria յայտնի հիւանդանոցին վիրաբոյժն է։ Եթէ ասոնց վրայ աւելցնենք տակաւին ապագայ շրջանաւարտները, այն ատեն կ'ունենանք բաւական պատկառելի թիւ մը հայ բժիշկներու, Իտալիոյ զանազան կողմերը ցանուած[1]։

Փափաքելի է որ այս հանդիսաւոր յարգանքի երեկոյթները հրաւիրակ ըլլան բոլոր հայ բժիշկներուն իրարու ձեռք կարկառելու և ընդհ. հայ բժշկական միութիւն մը կազմելու, և աւելի լուրջ կերպով ուսումնասիրելու մեր ազգին առողջապահական հարցը և գործնական արդիւնքներ հասցնելու, ինչ որ մեծ երազը եղած էր Տոքդ. Սէրվիչէնի։

Վերջացնելով խօսքս կը ներեմ ինծ յայտնել իղձ մը, յանուն իտալահայ բժիշկներու, այն է որ Բարիզահայ բժշկական միութիւնը և իր ատենապետ Տոքդ. Գոլոլեանը ջանք ընեն այսպիսի երեկոյթներու մէջ արտասանուած բժշկապատմական աշխատանքները կորուստէ փրկելով, հատորի մը մէջ ամփոփել և այդպիսի ձեռնարկ մը իսկական կոթողը պիտի ըլլայ հայ բժշկական կեանքին։

Բարիզ 26-Դ.-1928 Տոքդ. Արմ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

1. Յարգելի Տոքթորը մոռցեր է յիշել Իտալիա պաշտօնավարող միւս բժիշկները ալ, ինչպէս ՊՊ. Կ. Մանուէլեան, Ա. Մելքեան, Լ. Ուլուհոճեան, Ա. Ֆէնճեան են.

digitised by A.R.A.R.@

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ
## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

*Ղեւոնդ Եպս. Դուրեան.* — *Չորս աւետարանները. Բ. տիպ. Փարիզ*, 1926։
— *Պարզ Քարոզներ. Բ. հտ. Փարիզ*, 1924։
— *Պարզ Քարոզներ. Գ. հտ. Փարիզ*, 1925։
— *Պարզ Քարոզներ. Ե. հտ. Փարիզ*, 1927։
*Գուտուչեան Գ. Գրիգոր.* — *Հայ լեռը. Կ. Պոլիս*, 1912։
— *Կիլիկեան Աշխարհագրութիւն, տարրական ընթացք. Կ. Պոլիս*, 1922։
— *Վրէժի ոգին, Հայ Նամուսը. Կ. Պոլիս*, 1921։
— *Կարմիր նօթեր տարագիր կեանքէս. Բօր-Սայիտ*, 1919։
— *Հայկական աշխարհ. Սօֆիա*, 1928։
— *Գեղային վերածնութիւն. Սօֆիա*, 1927
— *Գպրոցականը, Ա. գիրք, Բ և Գ. Գիրք. Սօֆիա*, 1927։
*Ճ. Ֆ. Բըրհըրֆօրտ.* — *Աստուծոյ քնարը. Պրուքլին*, 1923։
*Հազարամեայի Արշալոյսը. Ա. հատոր, Դարերու աստուածային ծրագիրը. Բիդդսպուրկ*, 1919։
*Խորանի չուքեր լաւագոյն զոհերու. Պրուքլին*, 1924։
*Ազատութեան չահակիրը. Նիւ Եորք*, 1920։
*Ճ. Ֆ. Բըրհըրֆօրտ.* — *Ժողովուրդներուն ազատութիւնը. Պրուքլին*, 1928
— *Ժողովուրդին դրօշակը. Պրուքլին*, 1926։
— *Ո՞ւր են մեռեալները. Պրուքլին*, 1927
*Թատերանկարք Ստեղծագործութեան պատկերա-տրամի. Պրուքլին*, 1914։
*A. J. Edmunds, M. A.* — The Gospel According to Mark in the ancient armenian. Ardmore, 1926։
*Սարգիս Պօղոսեան.* — *Տխուր դրուագներ և արիւնոտ պատկերներ. Գահիրէ*, 1919։

Տքդ. Գրիգորեան, «Բուժանք»ի խմբագիրը նուիրեց

*Արնոտ Գիրք, Գորիս, տպարան «Սասուն»*, 1921։
*Խուստուպեան կանչեր Գորիս, տպարան «Սասուն»* 1921։
*Թէ ինչ պատմեց Թրէբոնէմը կամ ինչ է սիֆիլիսը, Փարիզ*, 1927։

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

*Մ. Ջզօն.* — *Վարդեր քեզ համար, Սօֆիա, տպ. Արաքս*, 1928. *գին՝* 10 *լեւա*։

*Ա. Արփիարեան.* — *Կեանքի պատկերներ – Դատապարտեալը և Երազի մը գինը. Հր. Վ. Զարդարեանի. Գահիրէ, տպ. Ցաբէթ պաղտասար*, 1928. *գին* 5 *Ե. Ղ.*

*Մաքսիմ Կօռքի.* — *Իմ ընկերս (թրգմ. Ա. Ցարութիւնեան). Հրատ. Ց. Աբրահամեան, տպ. Աստուրեան. Կ. Պոլիս* 1928. *գին* 50 *դրուշ*։

*Mespovb J. Seth.* Gorgin Khan the armenian minister and commander-in-chief of Nowab Mir Kasim of Bengal. Calcutta, 1928.

— A lecture delivered at «Galstaun Park» on the occasion of the inaugural garden party of the Armenian diocesan educational union. Calcutta, 1928.

digitised by A.R.A.R.@